ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
ДОКЛАДЫ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ REPORTS
Հատոր Том Volume 104 2004 № 3

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՈՒԴԴ 551.554:339.333

**Գ. Հ. Մարտիրոսյան, Հ. Վ. Թոքմաջյան, Ա. Խ. Մարկոսյան,
Տ. Ս. Մարտիրոսյան**

Հանձնարարության պայմանագիրը որպես խմելու ջրի մատակարարման համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման տարատեսակ

(Ներկայացված է ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի կողմից 05/II 2004)

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված են ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերը [1]: Ջրային համակարգի օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել՝ հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով, կոնցեսիայի պայմանագրով, առևտրային կազմակերպության ստեղծումով, վարձակալությամբ:

Հայաստանում տնտեսության ազատականացման անցումային փուլի ներկա պայմաններում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերն ավելի նպատակահարմար է հանձնել հավատարմագրային կառավարման: Հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում ջրային համակարգը (այդ թվում՝ հավատարմագրային կառավարչի կողմից ձեռք բերված գույքը) մնում է պետական սեփականություն [1]: Համաձայն գործող կարգի [2] հավատարմագրային կառավարիչը իրավունք ունի այլ անձի հանձնարարել կատարելու գույքի կառավարման համար անհրաժեշտ գործողություններ, եթե ինքը դրա համար լիազորված է հավատարմագրային կառավարման պայմանագրով կամ ստացել է կառավարման հիմնադրի գրավոր համաձայնությունը: Նշվածը հնարավոր է իրականացնել հանձնարարության պայմանագրի միջոցով: Հանձնարարության պայմանագրով հանձնակատարը պարտավորվում է հանձնարարողի անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ [2]: Հանձնակատարի կատարած գործարքից իրավունքները և պարտականություններն անմիջականորեն ծագում են հանձնարարողի համար: Հանձնարարության պայմանագիրը կնքելիս նշվում է ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրա: Հանձնակատարը պարտավոր է անձամբ կատարել իրեն տրված հանձնարարությունը,

հանձնարարողի պահանջով նրան հաղորդել հանձնարարության կատարման ընթացքի մասին բոլոր տեղեկությունները, հանձնարարության գործարքներից ստացածն հանձնել հանձնարարողին: Իր հերթին հանձնարարողը պարտավոր է հանձնարարության պայմանագրով նախատեսված իրավաբանական գործողությունները կատարելու համար ապահովել հանձնարարությունը կատարողի անհրաժեշտ միջոցներով, հատուցել հանձնակատարի կրած ծախսերը: Ընդ որում, հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին վարձատրել: Հանձնակատարն իրավունք ունի հանձնարարության կատարումը հանձնարարել այլ անձի: Եթե հանձնակատարի հնարավոր անձի անունը նշված է հանձնարարության պայմանագրում, հանձնակատարը պատասխանատվություն չի կրում նրա ընտրության և նրա կողմից գործերը վարելու համար: Եթե հանձնարարության կատարումն այլ անձի փոխանցելու հանձնակատարի իրավունքը նախատեսված չէ պայմանագրում, ապա հանձնակատարը պատասխանատվություն է կրում նրա ընտրության համար: Հանձնարարության պայմանագիրը, բացի պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերից, դադարում է նաև որպես հետևանք՝ հանձնարարողի կողմից հանձնարարությունը վերացնելու, հանձնակատարի հրաժարվելու և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Եթե հանձնարարության պայմանագիրը դադարել է մինչև հանձնակատարի կողմից հանձնարարության լրիվ կատարելը, ապա հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին հատուցել հանձնարարության կատարման ընթացքում նրա կրած ծախսերը, իսկ եթե հանձնակատարին հասնում է վարձատրություն՝ նրան վարձատրել կատարած աշխատանքին համաչափ [3]:

Հանձնարարության պայմանագիրը մշակելիս առաջարկում ենք կիրառել հետևյալ մոտեցումները.

– Հանձնակատարը, մինչև պայմանագրի կնքումը, հանձնարարողին է ներկայացնում գույքի կառավարման և զարգացման ծրագիր,

– Հանձնակատարն իր գործունեությունն իրականացնում է մասնաճյուղում իր առաջադրմամբ և հանձնարարողի կողմից տնօրեն և գլխավոր հաշվապահ նշանակելու միջոցով: Տնօրենի և գլխավոր հաշվապահի աշխատավարձը վճարվում է հանձնարարողի հաշվին՝ նրանց միջև կնքվող աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով և չափով,

– Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համար հավաքագրված դրամական միջոցների կենտրոնացման և վճարումների արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ առևտրային բանկերից մեկում բացվում է «կուտակիչ» հաշիվ: Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման դիմաց հավաքագրված դրամական միջոցներն ամբողջությամբ ենթակա են մուտքագրման այդ հաշվին: Հանձնարարողի և հանձնակատարի փոխադարձ համաձայնությամբ շաբաթվա (ամսվա) որևէ օր (օրեր), կողմերի ստորագրությամբ, տարանցիկ հաշվից փոխանցվում է՝

ա) մասնաճյուղի ընթացիկ հաշվին,

աա) դրամական միջոցների հավաքագրման ծախսերը փոխհատուցելու գումարը,

աբ) ջրային համակարգերի շահագործման ծախսերի փոխհատուցման գումարը ըստ նախապես հաստատված նախահաշվի,

բ) հանձնակատարի հաշվարկային հաշվին՝ հանձնակատարի վարձատրությունը (օրինակ, հավաքագրած գումարի որոշ տոկոսը),

գ) հանձնարարողի հաշվարկային հաշվին կամ նրա ցանկությամբ այլ հաշվի հավաքագրված և վերը նշված ա) և բ) կետերով սահմանված գումարների տարբերությունը,

– Հանձնակատարը հանձնարարողի կողմից նշված Հայաստանի Հանրապետության առևտրային բանկում հանձնարարողի անունով բացված դեպոզիտային հաշվում ներդնում է երաշխիքային գումար կողմերի միջև փոխհամաձայնեցված չափով և կարգով,

- Հանձնարարության պայմանագրով սահմանվում է «ռուպերային» չափ.

ա) երբ խմելու ջրի մատակարաման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման դիմաց հավաքագրված գումարները պակաս չեն պայմանագրով սահմանված կարգով կողմերի միջև կնքվող համաձայնագրերով սահմանված չափից, բայց բավարար չեն անհրաժեշտ վճարումները կատարելու համար, ապա հանձնակատարը դիմում է հանձնարարողին՝ հարցին լուծում տալու առաջարկով,

բ) երբ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման դիմաց հավաքագրված գումարները պակաս են պայմանագրով սահմանված կարգով կողմերի միջև կնքվող համաձայնագրերով սահմանված չափից, ապա պակաս գումարի չափը լրացվում է հանձնակատարի կողմից պայմանագրով սահմանված կարգով և չափով ներդրված երաշխիքի միջոցներից: Երաշխիքային գումարը հանձնակատարի կողմից ենթակա է վերականգնման կողմերի միջև նախապես սահմանված ժամկետում,

գ) երբ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համար հավաքագրված գումարները պակաս են պայմանագրով սահմանված կարգով կողմերի միջև կնքվող համաձայնագրերով սահմանված չափից, և պակասի չափը գերազանցում է երաշխիքային գումարի չափին, ապա հանձնակատարը պարտավոր է գումարի տարբերությունը լրացնել կողմերի միջև նախապես սահմանված ժամկետում,

– Պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ վաղաժամկետ լուծման դեպքում, հանձնակատարի լիազորությամբ տնօրենը հանձնարարողին կամ նրա գրավոր առաջարկով, այլ անձի է հանձնում կատարողական հաշվետվությունը և դրա կազմի մեջ մտնող փաստաթղթերի համարակալված ցանկը: Հանձնարարողը պայմանագրի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով կարող է, նախապես ծանուցելով հանձնակատարին, մասնաճյուղում իր հաշվին անցկացնել հաշվապահական հաշվառման մատյանների, ֆինանսական տեղեկանքների, հաշվետվությունների ու տեխնիկական և այլ փաստաթղթերի հաշվեստուգում (աուդիտ): Հանձնարարողը կարող է հաշվեստուգումներն իրականացնել սեփական ուժերով կամ օգտվել անկախ հաշվեստուգողների ծառայություններից՝ վարձատրելով նրանց իր հաշվին: Պայմանագրի պահանջների խախտման դեպքում խախտող կողմը մյուս կողմին հատուցում է պայմանագրի ընթացքում պատճառված վնասները և բաց թողնված օգուտները: Պայմանագրից հրաժարված կողմը պետք է մյուս կողմին տեղեկացնի պայմանագիրը դադարեցնելու մասին ոչ ուշ, քան պայմանագրի դադարեցման ենթադրյալ ժամկետի ավարտից որոշակի ժամանակ առաջ:

- Կողմերից մեկի պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում.

ա) եթե պայմանագրից վաղաժամկետ հրաժարվում է հանձնարարողը, ապա նա վճարում է հանձնակատարի կողմից բաց թողած օգուտները՝ օրենքով սահմանված կարգով,

բ) եթե պայմանագրից վաղաժամկետ հրաժարվում է հանձնակատարը, ապա հանձնարարողին է փոխանցվում հանձնակատարի կողմից պայմանագրով սահմանված կարգով և չափով ներդրված երաշխիքի միջոցների մասը ըստ կողմերի կողմից նախօրոք սահմանված կարգով և չափով:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

Г. А. Мартиросян, О. В. Токмаджян, А. Х. Маркосян, Т. С. Мартиросян

Договор о поручении как способ передачи прав пользования системой водоснабжения питьевой водой

Рассмотрены проблемы, касающиеся методов передачи прав пользования системой водоснабжения. Эти проблемы стали наиболее актуальны после принятия в 2002 г. Кодекса о воде, согласно которому права пользования такими объектами могут быть переданы негосударственным юридическим лицам на основе договоров о доверительном управлении, аренды, концессий, а также путем создания коммерческих организаций с участием частных инвесторов.

Исходя из сложившихся в Армении особенностей переходной экономики наиболее приемлемым на нынешнем этапе авторы считают метод передачи прав пользования системой водоснабжения питьевой водой согласно договору о доверительном управлении.

Գրականություն

1. ՀՀ Ջրային օրենսգիրք. - ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 24 (199), 10. 07. 2002.
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք. - ՀՀ պաշտոնական տեղեկաագիր, N 17 (50), 10. 08. 1998, էջ 318-319:
3. *Հովհաննիսյան Հ. U.* – Հայաստան՝ ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, 2002, N 8, էջ. 36-41: